ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 07 » սեպտեմբեր 2020թ. No 3053 - Լ

ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՎԱՐԱԿՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ (ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ մասը, 24-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով, ինչպես նաև կորոնավիրուսային հիվանդության՝ COVID-19 համատեքստում աշխատավայրում նշված հիվանդության ռիսկերի գնահատման նպատակով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝ «Աշխատավայրում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) վարակման ռիսկերի գնահատման (ժամանակավոր) մեթոդական ուղեցույցը»՝ համաձայն հավելվածի:

2. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը Առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանին:

/ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված

Առողջապահության նախարարի

2020թ. սեպտեմբեր « 07 » - ի թիվ 3053 – Լ հրամանի

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՎԱՐԱԿՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կորոնավիրուսային հիվանդության՝ COVID-19 (այսուհետ՝ COVID-19) դեմ պայքարի ուղղությամբ կազմակերպվել և իրականացվել են մի շարք հանրային առողջապահական և սոցիալական միջոցառումներ՝ ներառյալ տեղաշարժի սահմանափակումներ, դպրոցների և տնտեսվարող սուբյեկտների գործունեության մասնակի կամ լրիվ դադարեցում, մեկուսացման և/կամ ինքնամեկուսացման սահմանում կոնկրետ աշխարհագրական տարածքներում, միջազգային ճամփորդությունների սահմանափակումներ:
2. Կախված համաճարակային իրավիճակից տարբեր երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկված կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումները համապատասխանաբար փոփոխվել են (սահմանափակումների վերացում):
3. Սույն մեթոդական ուղեցույցը մշակվել է Առողջապահության համաշխարային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) առաջարկությունների հիման վրա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային մոտեցումները փոփոխվում են, հետևաբար, սույն փաստաթուղթը կարող է ենթարկվել փոփոխությունների՝ հիմք ընդունելով ԱՀԿ-ի հետագա նոր մոտեցումները:
4. Մեթոդական ուղեցույցը նախատեսված է նրանց համար, ովքեր ներգրավված են աշխատավայրում COVID-19 տարածման կանխարգելմանն ուղղված աշխատանքների կազմակերպման, գործողությունների ստանդարտ ընթացակարգերի (ԳՍԸ) մշակման գործում, ինչպես նաև հանրային առողջապահական մարմինների մասնագետների համար և ներառում է աշխատավայրերի համար ոչ առողջապահական բնույթի ընդհանուր ցուցումներ:

2. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

5. COVID-19 փոխանցվում է հիմնականում շնչառական կաթիլների կամ աղտոտված մակերեսների հետ շփման արդյունքում: Աշխատանքի բերումով վարակվելու վտանգին կարելի է ենթարկվել ցանկացած պահի՝ աշխատավայրում, աշխատանքի բերումով համայնք այցելելու ժամանակ, որտեղ տարածված է հիվանդությունը, ինչպես նաև աշխատանքի գնալիս և այնտեղից վերադառնալու ճանապարհին:

6. Աշխատանքի բերումով COVID-19 վարակվելու վտանգին ենթարկվելու ռիսկը կախված է պացիենտների կամ անախտանիշ անձանց հետ սերտ (1 մետրից պակաս) կամ հաճախակի շփվելու հավանականությունից:

7. Աղյուսակ 1-ում ներկայացված վարակվելու վտանգին ենթարկվելու ռիսկի մակարդակները կարող են օգնել աշխատավայրում ռիսկերի գնահատման՝ հաջորդիվ կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումներ ձեռնարկելու հարցում:

Աղյուսակ 1

Վարակվելու վտանգին ենթարկվելու ռիսկի մակարդակներ

Ռիսկի մակարդակ	Մեկնաբանություն
Վարակվելու վտանգին ենթարկվելու ցածր ռիսկ	Աշխատանքներ կամ առաջադրանքներ՝ առանց լայն հասարակայնության և աշխատակիցների, այցելուների, պատվիրատուների, հաճախորդների կամ պայմանագրային աշխատողների հետ հաճախակի, սերտ շփման Աշխատանքներ կամ առաջադրանքներ, որոնք չեն պահանջում շփում COVID-19 վարակված կամ դրա կասկածով անձանց հետ Աշխատակիցներն ունեն հանրության և աշխատակիցների հետ աշխատանքային նվազագույն շփումներ
Վարակվելու վտանգին ենթարկվելու միջին ռիսկ	Աշխատանքներ կամ առաջադրանքներ, որոնք ենթադրում են լայն հասարակայնության, աշխատակիցների, այցելուների, պատվիրատուների, հաճախորդների կամ պայմանագրային աշխատողների հետ սերտ, հաճախակի շփում, սակայն չեն ենթադրում շփում COVID-19 վարակված կամ դրա կասկածով անձանց հետ Այն տարածքներում, որտեղից շարունակում են հաղորդել COVID-19 դեպքերի մասին, ռիսկի այս մակարդակը կարող է վերաբերել այն աշխատողներին, որոնք աշխատանքի բերումով հաճախակի և սերտ շփում ունեն լայն

	հասարակության, այցելուների կամ հաճախորդների հետ՝ բնակչության բարձր խտություն ունեցող աշխատանքային միջավայրերում (օրինակ՝ սննդի շուկաներ, ավտոբուսի կայարաններ, հասարակական տրանսպորտ և այլ աշխատանքային գործունեություն, որտեղ առնվազն 1 մետր ֆիզիկական հեռավորություն դժվար է պահպանել) Աշխատանքներ կամ առաջադրանքներ, որոնք պահանջում են գործընկերների միջև սերտ և հաճախակի շփում: Այն տարածքներում, որտեղ առկա է COVID-19 համայնքային տարածում առկա չէ, այս սցենարը կարող է ներառել հաճախակի շփում վարակի համայնքային տարածում ունեցող տարածքներից վերադարձած անձանց հետ
Վարակվելու վտանգին ենթարկվելու բարձր ռիսկ	Աշխատանքային առաջադրանքներ, որոնք կարող են ենթադրել կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պացիենտների կամ կասկածելիների հետ սերտ շփում, ինչպես նաև, մեծ է հավանականությունը շփվելու աղտոտված առարկաների ու մակերեսների հետ Բժշկական կազմակերպություններից դուրս վարակվելու վտանգին ենթարկվելու նման սցենարների օրինակներից են COVID-19 պացիենտների կամ կասկածելիների տեղափոխումը փակ տրանսպորտային միջոցներով՝ առանց վարորդի և ուղևորի միջև առանձնացնող շերտի, կենցաղային կամ տնային խնամքի ծառայությունների տրամադրումը՝ COVID-19 պացիենտներին, ինչպես նաև շփում մահացածների դիակների հետ, որոնք մահվան պահին եղել են հիվանդ կամ կասկածելի

8. Միևնույն աշխատանքային միջավայրում կարող են լինել տարբեր մակարդակի ռիսկեր պարունակող աշխատանքներ կամ առաջադրանքներ: Հետևաբար, ռիսկերի գնահատումն անհրաժեշտ է իրականացնել յուրաքանչյուր կոնկրետ աշխատանքային միջավայրի և յուրաքանչյուր աշխատանքի կամ աշխատանքների խմբի համար: Ռիսկերի յուրաքանչյուր գնահատման համար անհրաժեշտ է հաշվի առնել միջավայրը, առաջադրանքը, սպառնալիքը, եթե այդպիսիք կան (օրինակ՝ պացիենտների կամ նրանց կոնտակտների հետ աշխատողների համար), և առկա ռեսուրսները, ինչպիսիք են անհատական պաշտպանության միջոցները:

9. Հիմնական հանրային ծառայությունները, սննդի մանրածախ և մեծածախ վաճառքը, օթևանատները, հասարակական տրանսպորտը, առաքման ծառայությունները, ջրամատակարարման ու կոմունալ ծառայությունները և պացիենտների կամ նրանց կոնտակտների հետ աշխատողները, կարող են առողջության և անվտանգության առումով ենթակվել վտանգի՝ մեծացնելով

վարակվելու ռիսկը՝ հաջորդիվ հիվանդության բարդություններով ընթացքը:

10. Գործատուի կողմից աշխատատեղերի ռիսկերի գնահատումն անհրաժեշտ է իրականացնել պարբերաբար՝ խորհրդակցելով հանրային առողջապահական մարմինների հետ:

3. ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

11. Աշխատավայրի համար, ռիսկերի գնահատման ուղղությամբ, մշակվում են COVID-19 կանխարգելման և հետևանքների մեղմման գործողությունների ծրագրեր՝ ռիսկերի գնահատման արդյունքներին ու համաճարակային իրավիճակին համապատասխան: Ծրագիրը ներառում է առողջության ապահովմանն ու անվտանգությանն ուղված միջոցառումներ՝ ուղված աշխատավայրի գործունեության ժամանակավոր դադարեցմանը, վերսկսմանը, և, անհրաժեշտության դեպքում, աշխատանքային պայմանների փոփոխմանը: Աշխատավայրերի գործունեության վերսկսումը մանրամասն պլանավորվում է նախապես, իսկ առողջության ու անվտանգության հետ կապված բոլոր հնարավոր ռիսկերը պատշաճ գնահատվում են: Գործողությունների ծրագիրը և ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումները պարբերաբար թարմացվում են՝ ելնելով համաճարակային իրավիճակից և դրա զարգացման միտումներից, աշխատավայրում COVID-19-ի նոր դեպքերի կամ աշխատակիցների, այցելուների և պատվիրատուների կամ հաճախորդների կողմից անվտանգության կանոններին չհետևելու դեպքում:

12. COVID-19 կանխարգելման և հետևանքների մեղմմանն ուղղված գործողությունները պետք է իրականացնել աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված մյուս ռիսկերի հաղթահարմանն ուղղված գործողությունների հետ միասին, ինչպիսիք են էրգոնոմիկական խնդիրները, աշխատանքային ծանրաբեռնվածությունն ու երկար աշխատանքային ժամերը, հեռավար աշխատանքը, հոգեսոցիալական ռիսկերը և այլն:

13. COVID-19 կանխարգելման և հետևանքների մեղմմանն ուղղված գործողությունների ծրագրերի մշակման և իրականացման ընթացքում անհրաժեշտ է խորհրդակցել հանրային առողջապահական մարմինների հետ, ինչպես նաև վերջինիս և ներդրված միջոցառումների մասին տեղեկացնել աշխատակիցներին: